

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԹԵՄ ՀՌՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԷՔՋԵԱՆԻՆ
ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Քէօլն

Կամօքն Աստուծոյ Ամենակալին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին բազում տարիներից ի վեր օգնականն է, մխիթարիչը և դաստիարակը հայ հաւատացեալ ժողովրդի որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:

Վերջին տասնամեակներին, ինչպէս Մայր Հայրենիքում, այնպէս էլ արտասահմանում, մեր Եկեղեցու զաւակները, տեղաշարժների հետևանքով, նոր բնակութիւն հաստատեցին աշխարհագրական տարբեր շրջաններում, ուր մեր Եկեղեցին սկսեց կազմակերպել նոր եկեղեցական համայնքներ և թեմեր:

Ահա նման պայմաններում- ասպնջական Գերմանիոյ մէջ ևս հետզհետէ աճեց թիւը հայ ազգաբնակչութեան, և կազմուեցին բազմաթիւ եկեղեցական համայնքներ, հոգևոր հովանու և խնամքի ներքև կենտրոնական Եւրոպիոյ Հայրապետական բարեջան Պատուիրակին:

Այս օրերին սակայն արդէն անհրաժեշտութիւն է դարձել Գերմանիոյ հայ համայնքները կազմակերպել իբրև ինքնուրոյն առանձին եկեղեցական թեմ: Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհուրդը, Մեր նախագահութեան ներքոյ, հաստատելով այս իրողութիւնը և ընդառաջելով Գերմանիոյ հայ

համայնքների վարչութեանց ներկայացուցիչների 25 Դեկտեմբերի 1991-ին Քէօլնում տեղի ունեցած ժողովի դիմումին, Մենք այսու Մեր հայրապետական կոնդակով հռչակում ենք կազմաւորումը Գերմանիոյ Հայոց Եկեղեցական ինքնուրոյն թեմի, կենտրոն ունենալով Քէօլն քաղաքը և նշանակում ենք Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Պէքճեանին որպէս թեմական առաջնորդ, կանոնական բոլոր իրաւասութիւններով, մաղթելով նրան լիակատար յաջողութիւն իր հոգևոր առաքելութեան ճանապարհին:

Յանձնարարում ենք Տ. Գարեգին Հայր Սուրբին, որ անյապաղ կազմի Թեմական Խորհուրդ և թեմական կանոնագրութիւն, Գերմանիոյ Հայ Առաքելական Եկեղեցու թեմի, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կանոնական վերին իշխանութեան ներքոյ:

Այս ուրախ առիթով յղում ենք Մեր հայրապետական բարի մաղթանքները և օրհնութիւնը նորահաստատ թեմի առաջնորդ Տ. Գարեգին վարդապետին, Գերմանիոյ եկեղեցական հայ համայնքների վարչութեանց յարգարժան անդամներին, հայկական եկեղեցական համայնքներին, և մշակութային ու բարեսիրական միութիւններին և համայն մեր հաւատացեալ զաւակներին:

Թող բարին Աստուած քրիստոսասէր Գերմանիոյ տարածքի վրայ անսասան և ծաղկեալ պահպանէ Գերմանիոյ հայոց թեմը իր եկեղեցիներով ու բարեպաշտ ժողովրդով:

«Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան որպէսզի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է» ամէն: (Մատթ. Ե. 24):

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 31 Յունուարի
1992 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԽԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1852



ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ
35-92